Հրանտ Մաթևոսյան

Որ էս երկիրը երկիր դառնա

Քաղաքական ներքին հակասությունները, ընդվզումներն ու պառակտումները, կուսակցական զզվոտուքները կրկին «լափում են» մարդկային ու բնական աշխարհակործան աղետներից բազմիցս փրկված-հառնած-գոյատևած ու հազարամյակների խորքից եկած մեզ բաժին հասած մեր էս մի բուռ-բռաչափ, էս մի փոքրիկ, էս մի վերջին, էս մի... հայահողակտորը:
Ի՞նչ է, մեր գենե՞րն են մեր թշնամիները, Աստծո կողմից, Աստծո կամքով էս խենթ ու խեղճ ազգին շնորհված-պարգևած հայահալած ճակատագի՞րը, անցյալի փորձություններից դասեր չառնե՞լը, տարվող քաղաքականությո՞ւնը... ո՞րը...
Բավ է... Դժվարին ու ծանր, դժգույն ու օրհասական այս պահին անսանք գոնե մեր մտքին, մեզնից խելոք մեծերին, ունկն դնենք, թե ի՞նչ է ասում Հրանտ Մաթևոսյան հայը, հայ-նահապետը:

– Այսօր, երբ հայոց հողը կրկին ծանր տնքում է, երբ կրկին հարցականի տակ է դրված ազգի լինել-չլինելու հարցը, ի՞նչն է այս պահին հուզում Ձեզ, Նահապետ:
– Մեր անպատասխանատվությունը մեր իսկ հանրապետության նկատմամբ, յուրաքանչյուր հայ քաղաքացու անպատասխանատվությունը երեկ՝ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հան-րապետության, այսօր՝ Անկախ Հայաստանի Հանրապետության նկատմամբ: Մենք, մեր ներսի անպատասխանատու ալարկոտի հետ դաշնակցած, մեր գործն ու վարքը կապում ենք՝ որպես թե դե-մոկրատական շարժման, որպես թե բռնակալության տապալման, որպես թե Անկախ պետությունների համագործակցության անհեռանկարայնության հետ, և որպես թե ահա մենք ինչ-որ մի բանի

առաջամարտիկներ ենք: Մինչդեռ ինքներս պիտի լինեինք մեր գլխի տերը, երեկ՝ նախկին հանրապետության, այսօր՝ այս նոր հանրապետության առջև մեր պարտականությունները կատարեինք բծախնդրությամբ... Երեկ բանակը չենք լիցքավորել հայկական ուժերով, երեկ առաջադրված բարեփոխումները չենք լցրել հայկական մտքի և ուժի կարողությամբ, չենք ենթարկվել երեկվա մեխանիզմին և չենք ենթարկվում այսօրվա մեխանիզմին... Շատ անպատասխանատու ենք... Իսկապես, անիշխանություն է, անարխիստներ կան մեջներս. այս անիշխանությունը մենք հակադրում ենք որպես թե ազատամարտիկի մեր կեցվածքին, որպես թե ազատություն սիրողի, բանակային կարգի մեջ չմտնողի մեր ինչ-որ մի կեցվածքին, և փաստորեն դա փախստականություն է ինքներս մեզանից, փախստականություն՝ ազգային պարտականությունից... Պետությունը միայն բանակով է կայանում... Եվ խորհրդարանն էլ խուսանավել է այդ հարցերին պատասխանելուց, և յուրաքանչյուր հայ պատանի՝ աղջիկ, տղա, լավ դաշնակցել են ահա. որպես թե բռնակալական երկրի քայքայման ժամանակներին, դաշնակցել՝ որպես թե ազգայնաբար, որպես թե հանուն համաշխարհային դեմոկրատիայի հաղթանակի մի բան ենք անում... Բայց իրականում ոչ մի բան չենք անում, իրականում մենք դավաճանում ենք մեր ազգին:

– Դեռ ինչքան պետք է մենք մեզանից փախչենք: Ղարաբաղցուն չորս տարի հարկավոր եղավ, որ նա հասկանա, որ պատերազմ է...

– Այո: Երևանցուն էլ դեռ երևի մի քիչ ավելի շատ պետք կլինի, չնայած պետություն դառնալու համար սերմերը ոնց որ թե լավն են: Պարզապես «գուրգուրանքով» պիտի բարձրացվեին... Պիտի սահմանները պահպանվեին... Պիտի մի քիչ այլ լիներ, քան թե կա...

Պատերազմը բռնություն է, բայց իրողություն: Պիտի իրողությանը ենթարկվես, պիտի մթի իրականության թելադրանքին ենթարկվես: Ոչ իրողությունը, ոչ կուրությունը քեզ այդ իրականու-թյունից, միևնույն է, խուսանավել, խուսափել չի տալու: Իրականությունը իրենը պարտադրում է. դու պարտավոր ես բաց լինել նրա առաջ և տղամարդու պես բանաձևել, քո պատասխանը տալ դրան... Բայց էլի վազում ենք Տիզբոն, էլի վազում ենք Մոսկվա, էլի վազում ենք... Մենք մեզ պիտի կարգավորենք, մեր գնդերը կարգավորենք, մեզ իրականության առջև կանգնեցնենք, հետո, մեր ներսում անձնավորված, մեր հանրապետության ներսում պատրաստ լինելուց հետո, դիմենք հարևան և մյուս

հանրապետություններին... Խնդրեմ, պիտի կանխենք՝ ահա սրանով... Մենք իսկապես պիտի պատրաստ լինենք:
– Պատմությունը հուշում է, որ պատրաստ լինելու համար մեզ ամուր ձեռք է պետք, որովհետև «իշխանասեր» չենք կամ «ազատասեր» ենք, որովհետև այսօր ունևորն իր ունեցվածքով է փորձում երեխային բանակ չթողնել («երեխա» ասածդ 18-35 տարեկան է), չունևորն էլ՝ այլ պատճառներով, բայց մի փաստ կա, որ ազգ պահելու համար պիտի քրտնես, պիտի արյուն տաս, պիտի քեզ զոհես... այլ ճշմարտություն չկա...
– Մեր իրականությանը պիտի տեր կանգնենք: Աղավնու պես թևածելով արևմտյան դեմոկրատիայի արտահայտությունները ռադիոհեռուստատեսային ալիքներով գալիս – էստեղ, մեր գլխին հովանի են դառնում և մեր ասվող խոսքը անընդհատ մեր բերնից խլում են: Երբեմն սթափեցնող «ծղրտոցներ» լինում են, երբեմն արյան դաժան հոտը զգում ենք, բայց մեր բերանները երբ բացում ենք այդ ասելու, դարձյալ տեսնում ենք, որ ուրիշ երկրի խոսք ասացինք, ուրիշ երկրների քաղաքական առաջնորդների խոսքեր եկան-թռան մեր բերանից... Մենք ուղղակի պիտի փակվենք և մեր խոսքը գտնենք, մեր խոսքին համապատասխան մեր վարքն ունենանք իրողության առաջ:
...Իսկ իրողությունը... Պատերազմի նոր կերպ է պարտադրվել մեզ: Սա Հայաստանի՝ Կովկասում մնալ-չմնալու հարցն է: Հարցն այսպես է դրված: Եթե մենք ուզում ենք լինել Կովկասի իրա-վահավասար ազգերից մեկը, մենք պարտավոր ենք չպարտվել, պարտվելու իրավունք չունենք և պիտի չպարտվենք: Բայց ամեն օր պարտություն է, ամեն օր փախուստ է: Մի կողմից հանրապետու-թյան դարպասները բացել ենք դրախտի, Արևմուտքի առջև, որն էլ ամենևին դրախտ չէ, որովհետև դա քո երկիրը չէ, մյուս կողմից էլ սկսել են մեզ վերացնել: Սա թուրքական նացիոնալիզմի լայն ծրագրերն են, և եթե կոտորվելու ենք, էստեղ պիտի կոտորվենք, ուրիշ բան չունեմ ես ասելու՝ էս է... Բայց եթե «եթե»-ով ենք խոսում: Եթե-եթե... Եթե ԱՊՀ-ն պահպանվելու է, եթե ԱՊՀ-ն չի պահպանվելու: Եթե ԱՊՀ-ն պահպանվելու է, Հայաստանը Ադրբեջանին սահման չի լինելու, չնայած այդ սահմանների չգոյության պայմաններում էլ այն տարածքներից, որոնք Ադրբեջան էին կոչվում, դարերով բնակվող հայությունը բռնագաղթեցվում էր, քաղաքակրթորեն վտարվում էր իր պապենական հողից, և այդ թուրքը, թուրք գեղջուկ տարրը փառահեղորեն այդ հողի վրա դիմանում էր, քո հայը չէր դիմանում, փախչում էր, և բոլորս գիտենք, թե ինչ կատարվեց...

Բայց եթե ԱՊՀ-ն չի պահպանվելու: Առաջանում են թուրքական և մահմեդական ազդեցության ոլորտներ: Այս դեպքում ի՞նչ... Եթե հաշտեցման փրկիչ խոսքը Մոսկվայից էր գալու, թե Անկարայից էր գալու, երկու դեպքերում էլ նույնն էր լինելու: Անկարան բացարձակապես չէր կռվելու, այլ Ադրբեջանին՝ իր օժանդակությամբ արձակելու էր Հայաստանի վրա: Մոսկվան էլ կացուկամ իր խոս-տումներով ժողովուրդներին կռվեցնելու էր: Այս պայմաններում ի՞նչ ենք անելու: Երկու դեպքում էլ ուրիշ ընտրություն չկա: Ինչ-որ մի ժամանակ մենք խաբվեցինք, թե թուրքերի ախորժակը բավա-րարված կլինի Արևմտյան Հայաստանը կլլելով, որ նոր ժամանակներ են եկել, և պետությունների միջև առաջանում են նոր հարաբերություններ, բայց չէ... Էնքան խաբված մնացինք, մինչև որ Էնտեղի դեմոկրատները, մտավորականներն իրենց խոսքն ասացին, թե Ղարաբաղն Ադրբեջանինն է: Մենք դա համարեցինք, որ ֆաշիստական կուսակցությունների ճնշման տակ են ասել, բայց պետք է մտածենք, որ ֆաշիստական կուսակցություններն էլ, վերջին հաշվով, իրենք են ստեղծել, իրենց ժողովուրդն է ստեղծել, իրենց կառավարությունը: Այստեղ ուղղակի դրված է ազգ և ազգ հարցը:

– Պակիստանի և Հնդկաստանի սահմանում, Փենջաբում սինկխերն են ապրում: Դա այն ցեղն է, որ չթողեց, որ մահմեդականությունը մտնի Հնդկաստան: Դրանց մասին ասում են, որ դաշույնը կամ հետո արդեն հրացանը կողքն են քնել գիշեր-ցերեկ, որպեսզի մահմեդականությունն այդ հատվածով չանցնի: Հիմա նույն բանը, արդեն որերորդ անգամ մեզ նույն բանն է թելադրվում: Հիմա, քան երբևէ, մեր պետության ուղեղը պիտի աշխատի, զինվորն էլ պետք է կանգնի ու իր սահմանը պաշտպանի:
– Կամ, կամ... Կամ Կովկասում կմնանք, կամ չենք մնա: Կամ Կովկասում կմնանք որպես իրավահավասար մի պետություն... Էն էլ ռեսուրս չունենք, հազար ու մի բան չունենք, ու մնացած բոլոր բաները բոլորս էլ գիտենք, կամ չենք մնա: Ինչ ասեմ, է, բոլոր իշխող բարձունքները թշնամու ձեռքին են, ուղղակի լցրել են էս պուճուր հովիտն ու բոլոր կողմերից փորձում են կոտորել... Մենք էլ պիտի չկոտորվենք...
– Մի կողմից պետք է կռվենք, մյուս կողմից մեր դիվանագիտությունն աշխատեցնենք: Բայց այս պահին, եթե մեր շուրջն ենք նայում, տեսնում ենք, որ դաշնակից չունենք...

– Եթե լինենք, ազգը, պետությունը եթե լինեն, դաշնակից անպայման կհայտնվի:
– Դաշնակից այն առումով, որ սրանք քաղաքական խաղեր են, որ մի անգամ մեր խաղաքարտը կարող է բռնել, մյուս անգամ՝ կարող է չբռնել: Մեզանից շատ քիչ բան է կախված, ցավոք... Հռոմում մեր գործերը վատ ընթացան: Դրանից հետո ո՞ւմ կարող ենք տեսնել մեզ դաշնակից՝ այնտեղ մեր ոչ նախանձելի վիճակը բացահայտվելուց հետո...
– Շատ կներես, բայց նույնիսկ թուրքին (եթե դու քո ինքնությանը տեր ես կանգնում), նույնիսկ թուրքին եմ ինձ դաշնակից տեսնում: Եթե գործ ես արել, աշխատել ես, պատերազմի և խաղաղության քաղաքականությունը միասնորեն ես տանում: Բոլորը իմ թշնամիները կդառնան, եթե ինքս ինձ ինքնասպանության դատապարտեմ, և բոլորը իմ բարեկամները կդառնան, եթե ես դիմացել-դիմանամ ու ապրեմ: Այդ պատճառով էլ Արցախի հարցում հենց սկզբում էլ այդ երկդիմի քաղաքականությունն ինձ շատ կասկածելի էր թվում: Բայց ինձ չէի հանձնում այդ մտածողությանը, որովհետև որպես թե «գիտակ» մարդկանց էի թողնում, որոնք խորհրդարանին և առհասարակ հայ հասարակական մտքին էին հանձնում Արցախի վերաբերյալ այդ երկդիմի քաղաքականության տարբերակը, ինչ որ մենք ընտրել ենք: Բայց այդ երկակի խաղերը շիտակ քայլեր չէին, և մենք էլ ուղղակի ընկնելու ենք մեր սարքած թակարդը: Ռիկաշետը ինչպե՞ս է կոչվում, ռիկաշետը ի՞նչ է... Մեզ վրա արձակած այդ գնդակը ռիկաշետով պիտի դիպչեր թուրքին: Այդ արձակածը նույն երանգով արձակողին էր դառնալու՝ խուսափեցինք: Գիտես, ճշմարտությունը փիլիսոփային և մարտիկին, վերջին հաշվով, բերում է հասարակ թվացող մի մտքի, այն ճշմարտության, որ հայրենիքը չի կարելի տալ: Պիտի բոլորս մեկ լինենք, և այստեղ այլևս փիլիսոփայություն կամ այլ վարժանքներ պետք չեն:
– Ինձ թվում է, դեռ գոտիներս պնդացնելու տեղ ունենք, դեռ ստիպված պիտի վերադառնանք Սարդարապատ: Նորից վատ վիճակ էր այն ժամանակ, բայց կարողացանք պահպանել մեր գոյու-թյունը...
– Ասացիր՝ հիշեցի: Ակսել Բակունցն այնտեղ կռվում էր, այն երեխան՝ Նաիրի Զարյանն այն կռվում կար, այլ երեխաներ էլ կային: Արդեն վաստակավոր Դերենիկ Դեմիրճյանը զենք էր բաժանում: Գրիգոր Ղափանցյանն այնտեղ էր, որբանոցի երեխեքը, ավագ դասարանի տղաները այնտեղ էին: Սարդարապատը ապագա բանաստեղծներին, ներկա բանաստեղծներին, օրվա

բանաստեղծներին, գիտնականներին՝ բոլորին, տարել էր այնտեղ:
– Այսինքն, այսօր չկա Արցախի համաժողովրդական պայքարը:
– Չկա, չկա և մեղքը խորհրդարանինն է, բոլորինս է... ամբողջ ազգինն է...
– Իսկ մեղքը քավելու ճանապա՞րհը:
– Արցախը պիտի ետ բերենք: Նրանք մեզ ասում են՝ Արցախն ինքնավարություն կստանա այն դեպքում, երբ Հայաստանից փախած ադրբեջանցիները ետ գան: Ինչպես որ 60-ական թվականներին էին ասում նրանք. «Եթե դուք ձեր շրջանների ադրբեջանցիներին ինքնավարություն կտաք, կմիացնեք մեզ իրենց տարածությամբ, ունեցվածքով...»: Հիմա նրանց՝ այստեղի ադրբեջանցիների տեղն զբաղեցրել են 300 հազար հայեր՝ Բաքվի փախստականներ, իսկ Բաքվի այդ հայ բնակիչների ունեցվածքը՝ Ադրբեջանի հողային իրավունքներով՝ անցել է Ադրբեջանին: Հիմա այդ հարցը չկա: Այն քաղաքացիները, այն մարդիկ, որոնք Ադրբեջանի լիիրավ քաղաքացիներն էին, Ադրբեջանի տերերն էին, այժմ տնանկ, զուրկ, տկլոր, հայտնվել են Հայաստանում, և դա փոխանակության պես ինչ-որ մի բան էր: Արցախի հարցը մնացել է հողային հարց, հողի և իրավունքների հարց: Արցախը մարդիկ դիտում էին որպես «անտեր բաղի» հարց: Արցախում ապրող հայը հաշվի մեջ չէր, մինչև հիմա էլ «տերիտորիալ պահանջներ են» ներկայացվում ամբողջ աշխարհին: Հենց այսպես՝ «Տերիտորիալ պահանջ դրացի մարդուց»:
...Եվ ինձ համար նշանակություն չունի, թե իմ պատվիրակությանը դրսում ինչպես կընդունեն, կսուլեն, կսադրեն, մերոնք կգնան կտեսնեն հյուրանոցում համար չունեն, մութ միջանցքներում դանակով կվախեցնեն, կապտակեն, բացարձակապես ոչ մի նշանակություն չունի: Այս թվարկածներս բոլորն էլ սպասելի են, և այդ ամբողջը կոչվում է միջազգային հանրության կարծիք: Բայց հայ մարդու և այստեղի քաղաքացու քո կարծիքը այն է, ինչ որ կա: Նրանք արդյո՞ք կարող են համոզել, որ Ղարաբաղն իմ ու քո հողը չէ, որ Ղարաբաղն իմ կեսը չէ: Ղարաբաղը նաև իմ պրոբլեմն է, իմ՝ Հայաստանի քաղաքացու պրոբլեմը, որովհետև երբ այնտեղից վռնդում են, գալիս են իմ դուռը, գալիս են իմ օրապահիկը կիսելու, իմ սուղ միջոցները խժռելու-ոչնչացնելու... սա փախստականության ոճն է... Ղարաբաղն իմ պրոբլեմն է, Ղարաբաղն իմ հողն է, Ղարաբաղից չի կարելի հրաժարվել, եթե նույնիսկ թուրքի ետևում ով ասես կանգնած լինի, եթե նույնիսկ Ամերիկայի Միացյալ Նահանգները: Այսպես, մնացածը ինձ համար բացարձակապես անընդունելի տարբերակներ են:

– Ես էլ այդպես գիտեմ: Գիտեմ նաև, որ պիտի լինենք, որ մեր լինելիության մասին է խոսքը: Բայց այսօր այնպիսի իրականության առջև ենք կանգնել, որ այս անվերջանալի, պաշտպանողական պատերազմում զոհվելու կամ փրկվելու հարցն է դրված: Ապավինման ի՞նչ եզրեր կարող են լինել, Նահապետ:
– Հայաստանում տանկեր չկա՞ն...
– Այնտեղ տանկով ջարդում են, Երևանում կամ Կիրովականում տանկ, երևի թե, ունենք, որը չենք օգտագործում կամ չենք ուզում զոհաբերել, և կամ էլ ինչպես է՝ մեր մեջ ստրուկն է նստած, թող տասը հոգի էլ զոհվեն, ի՞նչ է պատահել... սրա մասին է թերևս խոսքը:
– Պատմությունից երևի կհիշես, թե ինչպես 1918-20 թվականներին ադրբեջանցիները (մուսավաթները մենշևիկների աջակցությամբ) զինաթափեցին-կոտորեցին նահանջող ռուսական դիվիզիաները: Ճիշտ արեցին... Չէ՛, եկել թշնամանքը, պատերազմը գցել ես այս երկրի մեջը, հիմա էլ վեր ես կացել ու հանգիստ գնում ես, հա՞, դե տուր էդ զենքը մեզ: Ճիշտ բան էր սա: Մենք նախկին Միությունից մեր բաժինը ունենք, ինչպես նվերների, այնպես էլ պահանջների բաժինը ունենք: Սա ռազմական հզոր մի երկիր էր, ուրեմն մեր բաժինը մենք պիտի խլենք-ուզենք-ետ վերցնենք: Թուրքն իր կովի, իր ուզելու ձևն ունի, տեսնում ես չէ՞. մորով-մանկով շրջապատի, ինքը ետևից քշի... Բայց եթե սա իմպերիայի ունեցվածքն է, ես էլ իմ բաժինը ունեմ, իմ բաժինը ինձ տվեք...
– Մոր ու մանկով չենք արել, իհարկե, բայց եթե արվեր էլ, եթե իսկապես հրահանգ լիներ՝ մեր ու մանուկ չէին հարցնելու: Պարզապես, սա մի քիչ ավելի խորը և գուցե Ձեզ՝ պատգամավորիդ հասու քաղաքականություն է, որովհետև վարագույրներից այն կողմ բաներ կան, որոնք հասարակ մահկանացուներին տեսանելի չեն լինում... Բացի դրանից կառավարության անդամներին ու խորհրդարանի պատգամավորներին կարող ենք ծեծել, բայց չենք կարող ասել՝ թող էս զենքն ու գնա այստեղից...
– Ճիշտ է: Հիշո՞ւմ ես Ցիցիանովի գլուխն ով կտրեց: Բաքվի խանը: Կտրեց, ուղարկեց: «Հաջի Մուրադը» հիշո՞ւմ ես: Հաջի Մուրադն էլ դավաճան էր: Էսպես էր: Մի անգամ թուրք ոսկեպարցի մի գրողի հետ էի խոսում, ասաց՝ Ադրբեջանում անգլուխ երկու լեշ կա թաղված: Մեկը՝ Հաջի Մուրադն է, մյուսը՝ Ցիցիանովը: Նրանցից մեկին դիտել են որպես դավաճանի, մյուսին՝ որպես նվաճողի: Էլի մեր հավատարմությունն է պատժվում ռուսի կողմից, իսկ ադրբեջանցին դավաճանել է, դավաճանում է ու նորից է դավաճանում...

– Բայց մեր հավատարմությունը տեղ չի հասնում: Սա հավատարմություն չի՛ և այս ոգին որ կա, շատ վատ է: Ուրիշի բանակում մենք և՛ քաջարի զինվոր ենք, և՛ պանծալի գեներալ, իսկ մեզ մոտ՝ խեղ-ճուկրակ մարդիկ:
– Ադմիրալ Իսակովը ղարաբաղցի էր, Նախիջևանիկ գյուղից: 1918 թվականին ծովակալ Բագրատունի կար, ժամանակավոր կառավարությունից հետո փախել-եկել էր այստեղ՝ Հայաստան (ընդհանրապես այդ ժամանակ շատ մտավորականներ վերադարձան Հայաստան), Իսակովին էլ ճանաչում էր: Ահա թե ինչ է ասել Բագրատունին. մեկ էլ տեսնեմ Իսակովն ինձ կանչել ու թե՝ քեզ նշանակում եմ Վանի նավատորմների պետ, ինձ՝ նախկին ադմիրալիս՝ նման բան է ասում, հլա դրա՞ն նայիր... Տեսնո՞ւմ ես՝ ո՞ւր է տանում քո ողորմելի ինտերնացիոնալիզմը... Ցավալիորեն, այո՛, քո գեներալներն այլ բանակների զորավարներ են եղել, քո բարձր չինովնիկները եղել են ուրիշ, բարձր դռների, Մոսկվայի, Պարսկաստանի կամ ամերիկյան արքունիքներում ծառացած սքանչելի տղերք, ուրիշ պլատֆորմի վրա ծաղկած տղերք, քաղաքական գործիչներ կամ ինչպես մի պիեսում է ասվում՝ Պետրոս Մեծի ուսին նստել ու պարծենում է, թե ինչ բարձրահասակ է: Տեղում աճած տղա է մեզ պետք:
– Բոլոր մեծ պատերազմներում մարշալների ու գեներալների շարքերն արժանապատվորեն համալրած ազգն այսօր իր հրամանատարն ու իր զինվորը չունի: Այսօր համատարած փախուստ է, փախուստ է զինվորությունից, սահմանից: Զինվորագրվում են լոկ նրանք, շատ քիչ թվով, որոնք իրենց էության մեջ պատմություն են կրում և արյան հիշողություն ունեն: Մի խոսքով, կամավորների հերթական ծաղկաքաղ է:
– Պատերազմը, բանակը՝ երկուսն էլ բռնություն են, աշխատանք և բռնություն, և եթե այսօր մենք ձևավորված բանակ չունենք, դա խորհրդարանի, իշխանությունների, նախագահի մեծ թերությունն է: Այո, տղամարդավարի պետք է խոստովանենք, որ չենք ստեղծել բանակ և իրավունք չունենք արդարանալու, թե՝ այսինչը կամ այնինչը խանգարեց: Բանակը, պատերազմը ծանր ու կոպիտ աշխատանք է...
– Այս դեպքում պետք է հուսալ, որ եթե ոչ մենք, ապա գոնե պատմությունը մեզ կստիպի, որ բռնության գնանք՝ գերագույն նպատակը տեսնելով պետության ստեղծումն ու կայացումը:
– Առայժմ մեր սիրելի գրողներն էլ մեզ հետ ֆիդայական շարժման պատերազմական, արկածախնդրական կերպարն են մարմնավորել:

Այնուհանդերձ, կրկնում եմ, որ դա չէ բանակը... Շարք մտնելը, իր կամքն ուրիշի կամքին ենթարկելը շատ դժվարին բան է...
– Եվ այնուամենայնիվ, ո՞րն եք համարում մեր կատարելիք առաջին դաժան, բայց կենսատու քայլը:
– Զոհվելու քաջություն ունենալը: Շատ բաներ ենք շրջանցել: Եվ եթե շատ բաներում առաջնորդվեինք նույնիսկ սահմանադրորեն, նախկին Միությունից անջատվելու գորբաչովյան ծրագրերով, այսքան վնաս չէր լինի, ինչպես որ եղավ սեփական, ամբոխավարական, անիշխանական մեր վարվելակերպի ժամանակ: Բանակը մինչև հիմա 75 տոկոսով պիտի հայացած լիներ: Խուսափել ենք և այդ նվիրական գործը ձախողողներին մեր մեջ պիտի փնտրենք:
– Այո, մեր մեջ և ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավորների կողքին: Մինչև այսօր խորհրդարանը նույնիսկ Հայրիկյանին պատասխանատվության չի կանչել, մինչդեռ «տոտալիտար», «բռնա-կալական», «զավթողական» ռուսական բանակում մեր զավակներին չընդգրկելու համար նա ջանք չխնայեց և համոթ խորհրդարանի և ինչու ոչ՝ շատ-շատերիս, դա նրան հաջողվեց: Հետաքրքիր է, ո՞ւմ ջրաղացին էր ջուր լցնում իր սադրանքներով: Մինչդեռ այդ նույն «զավթողականի» հիմքի վրա կայացավ մեր հարևանի բանակը, դրան ավելացրած նրանց վարձկանները, էլ չեմ ասում ֆինանսավորման եղանակը:
– Նրանք պատերազմի լրիվ օրենքներով են գործում, իսկ մենք միայն անճարակ, միամտորեն զանգատվում ենք, բողոքում, ասում՝ սխալ խփեց: Պատերազմը չունի սրբություն, ունի կանոններ՝ խաբեության, կաշառքի, մնացած իր բոլոր ատրիբուտներով: Վկան՝ հարևան հանրապետության վարած քաղաքականությունն ու գործունեությունը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: Իսկ մե՞զ մոտ... Փաստորեն էլի «ղաչաղի», կամավորի կերպարն է հրապարակում և ոչ թե չարքաշ, աշխատավոր զինվորի կերպարը: Բանակի կերպարը դեռ չի եկել հրապարակ: Խփիր՝ փախիր, պար-տիզանական կռվի կերպարն է եկել...
– ...Եվ ոչ մի պատասխանատվություն: Պատասխանատվությունը կրելու է պաշտպանության նախարարը:
– Ցավում եմ, որ այդպես է: Վազգեն Սարգսյանին ես սիրում եմ, կապված է սիրտս այդ տղայի հետ:
– Նա գրող է և, թերևս, Ձեր երկու հոգեորդիները՝ Վազգենը և Վանոն այսօր ամենակարևոր ու պատասխանատու պաշտոններն են զբաղեցնում, ամենածանր

բեռն են տանում հանրապետության նախագահի հետ:
– Ասեմ, որ երկուսն էլ (և ովքեր էլ որ լինեին այդ պաշտոններում, իմ սիրելիներն էին լինելու, և ես պաշտամունքով և խղճահարությամբ էի մոտենալու) չեն կարող դավաճանել, երկուսն էլ բավական անկեղծ են, երկուսն էլ բավական անպաշտպան, խորամանկություն չունեն: Այսօրվա հայոց պայքարի ամենաանպաշտպան, ամենաանթիկունք և ամենաազնիվ գոյություններն են այնտեղ: Երկուսի արարքն էլ ես ուղղակի մարդկային բարձր սխրանք եմ համարում, որ ստանձնեցին, և մյուս հատկանիշը, որ նույնպես երկուսինն է՝ խիզախությունն ու անկեղծությունն եմ համարում: Այդուհանդերձ (խոսքս ոչ այնքան իրենց, որքան այլոց է վերաբերում) հրապարակը նրանց վատ բանի սովորեցրեց... Պետական այրի վարք չի դա: Չի կարելի: Չի կարելի առանց փողկապի, չսափրված հայտնվել էկրանին, չի կարելի կոտրած ատամներով պետական պաշտոնյա լինել, չի կարելի 15 րոպե աշխատանքից ուշանալ, չի կարելի դեպքը պատահելուց 5 րոպե հետո այնտեղ չլինել, չի կարելի անառողջ լինել: Շատ բաներ չի կարելի: Մեզ հիանալի պետական չինովնիկներ են պետք, հոյակապ կատարողներ են պետք, լավ, հստակ ծառայողներ են պետք...
– Բայց ծառայողներին աճեցնել է պետք, սովորեցնել է պետք, կրթել է պետք, հագցնել է պետք, պետական, հայրական վարվեցողություն է պետք: Մեր միջից են դուրս գալու այդ մարդիկ:
– Ճիշտ է, և դրա օրինակը նախագահն ինքը պետք է տա:
– Եթե այդ օրինակը նախագահը տա, կուսակցությունները եթե իսկապես սրտացավ են, և նրանց պայքարը իսկապես աթոռի համար չէ (չեմ ասում, թե մեծ սխալը պետք է կուլ տան, բայց միշտ էլ մեր գլխին կարող են կոտրել Վրաստանի կամ Ադրբեջանի տարբերակը, և վերջին օրերի քաղաքական սուր իրադարձություններից հենց վատ, շատ վատ հոտ էր փչում), կարող են իրենց գործելակերպը ծառայեցնել միայն և միայն ազգի շահերին: Ով չի հասկանում, թող հասկանա, որ յուրաքանչյուր հեղաշրջում կամ թե նախագահի ու խորհրդարանի փոփոխում նշանակում է նորից ետ գնալ, վերածվել քաոսի, իսկ դրանում մեր կողքի հարևանները շատ են շահագրգռված, և նրանցից ոչ ոք չի ցանկանա, որ Հայաստանն արագ հզորանա:
– Դե էս մեր չակերտավոր ազատության պայմաններում ամեն մի հեռացող իր հետ շատ բան է գողանալու-տանելու: Ունեցվածք, բացվող հնարավորություններ, գաղափարներ: Տանելու է առաջին հերթին

իշխանությունից, հետո էլ հայրենիքից: Հիշո՞ւմ ես, 1898-99 թվականներին Տոմակի և Գափոյի ջարդերի ժամանակ Սուլթանը ծնկները ծեծում էր, հայրերին անիծում, թե՝ ոսկիներս տարան, կարողությունս տարան: Նրա պես պիտի դատենք-մտածենք: Ոսկիներս տանում են, կարողություններս տանում են ու կտանեն: Իրենք մեր կարողությունն են, մեզանից հեռանում են, մեզ թուլացնում են: Խղճին դեմ կլինի, եթե ասես՝ մնացեք էստեղ, ինձ հետ, թշվառությունն ինձ հետ կիսեք: Բայց մենք ձեզ ունեցել ենք չէ՞, այ որդիք, մենք ձեզ զրկանքով-բանով դպրոց ենք տվել: Ճիշտ չէ՞... Իմ երեխեն սպորտդպրոց չի գնացել, դու ես գնացել, պետությունը հագցրել է, կրթել: Ազգային բան չէ՞ սա, ու հիմա դու փախչում ես, դասալիք ես, որտեղից էլ որ փախչես՝ սահմանից, կռվի դաշտից, պաշտոնից, թե իշխանությունից, թե հայրենիքից...
Չէ, սա ձև չէ: Էս ձևը լավ չէ: Թայֆա է...
– Այնպիսի ժամանակներ են, որ թայֆաները, խմբերն են ասպարեզ ընկնում: Եվ իրենք իրար միացած, ախորժակները սրած ասում են՝ էս տունը վերցնում ենք, և իշխում են կենվորների վրա՝ թե թքած կենվորների վրա, որովհետև նրանք առանձին-առանձին են:
– Առայժմ մութ գործող ուժը հրապարակ է գցել իր հիմարներին ու սարսաղներին, որ է՝ պառլամենտը և կուսակցությունները, «գեղամիջում հաչող շներ» որպես (թող վիրավորական չլինի), իսկ ինքը կողոպտում է երկիրը:
– Այսինքն՝ դարձել է կրկես, ծաղրածուների միջավայր, ժողովրդին զբաղեցնում են...
– Հա, ռադիոն էլ ամբողջ օրը միացրած, թատրոն-թամաշա է ասես: Իսկ ինքը ոչինչ չի անում: Մեկն իր խանութպանի մռութին չի խփում (ում հետ արաղ է խմել), ուժն էն խեղճ վարժապետներին է պատում...
– Իսկ հնարավոր է, որ պատմության քառուղիներում կորցրել ենք մեր... կառավարվելու կոդը, գոյատևման բնազդը:
– Կորցրել ենք, չենք կորցրել, այդ մասին չխոսենք, որովհետև եթե ասենք կորցրել ենք, էլի ենք կորցնելու: Մարդը հակված է կառավարվելու, հակված է պաշտպանվելու, լավ պաշտպանվելու, ազգ դառնալու, ազգն էլ պետության վերածեցնելու: Այդ հուսահատական բաները չեմ սիրում, թե՝ ազգը պառավել է՝ էս էլ թշնամու կողմից պարտադրված կոդ է: Սուլթանը, թուրքը մեզ անիշխան է որակել, որ մենք անիշխանների ազգ ենք: Ես էլ պատասխանում եմ. անիշխանների ազգ ենք, որովհետև իշխանությունը իմը չէ և դրա համար էլ

իշխանություններին ըմբոստնել եմ: Իսկապես անիշխաններ չենք, և մենք մեր իշխանությունը կունենանք: Դրա պատասխանը ես կտամ, երբ մենք մեր իշխանությունը կունենանք և այդ իշխանությամբ կպատասխանենք թշնամու սարքած խարանին: Վերևում Աստված կա, պիտի մեր վարքն այնպիսին լինի, որ նույնիսկ թշնամին զարմանա, հիանա, թե էս ինչ գեղեցիկ զոհ էր, էս ինչ ճիշտ բան էր:

– Եվ մնալու համար մեզ նորից ու նորից պետական կառուցվածք է պետք, և ոչ թե այսպես, ամբոխավարի, թալանչիական հոգեբանությամբ, գողանալու, խփելու, սպանելու մտայնությամբ շարունակենք դոփել տեղում: Եթե երեկ ձեր ասած «ռուս սալդաթից» վախենում էինք, ապա այսօր մեր իսկ ոստիկաններին կարող ենք խփել, պաշտոնյաների վրա հարձակվել, կրակ բացել:

– Մինչև հիմա ոչ մեկը մատ չի բարձրացրել էս երկիրը ոտք դրած ռուս չինովնիկի, որևէ պարսիկ պաշտոնյայի վրա... մինչև հիմա մեծարում ենք Աղասուն, որից հետո 150 տարի է անցել, նրան աստվածների շարքն ենք դասում, որ համարձակվել է իր հորաքրոջ աղջկան առևանգող ֆարրաշին սպանել: Այստեղ Աբովյանի տաղանդն է, նրա հանճարը՝ ետին թվով:

– Իսկ դրա փոխարեն պատրաստ ենք իրար կոկորդ պատռել, միմյանց փորոտիք թափել (և ցավոք, խորհրդարանն էլ արդեն ետին թատերաբեմի է վերածվել)...

– Իմ ու քո սիրելի Վանոն (ես արդեն քիչ առաջ նրա մասին ասացի), պարտվում է փողոցում, քաղաքում սանձարձակություն է, և Վանոյի պարտությունը իր բարությունից է գալիս: Հիշում եմ, երկրաշարժից հետո էր: Ես ու Ռազմիկ Դավոյանը Մեծ Պարնիում էինք, լսեցինք, որ Երևանում դեպքեր են տեղի ունեցել, ընդհարումներ, որոնք ավարտվել են պետավտոտեսչության աշխատող-ների պարտությամբ: Շատ ցավալի էր: Խուժանը հաղթել էր պետական կառույցներին: Կառո՛ւյցը պարտվել էր խուժանին, սա սարսափելի էր, շատ... Այդ ժամանակ դեռ Հայաստանի Սոցիալիստական Հանրապետություն էր, իր համար կիսաանկախ պետություն էր, ինչևէ, ինչ որ էր, ինչպես դա կարելի էր անել: Երբ պետությունը կուժեղանա, կտեսնենք, որ իշխանությունները զորեղանում են, արագ, արագ ժողովրդի կապերը կբացենք և կթողնենք ժողովրդին, որ պետությանը խփի, չթողնի, որ իշխանությունները լկտիանան:

– Եվ եթե որևէ քայլ է կատարվում կամ գործողություն է սպասվում ոստիկանների կողմից, ապա որևէ կուսակցություն իր անդամներին դուրս է թափում և իշխանության հրաժարականն է պահանջում: Հիմա ի՞նչ պիտի անենք:

Կամ պիտի թվացյալ դեմոկրատիա լինի, այսինքն՝ ամբոխն ինչ ուզենա անի, կամ պետությունը կայանալու համար պիտի վերադառնանք ուժեղ ձեռքին: Մեր անելանելի վիճակն այսօր դա է թելադրում:
– Քուվեյթի պատերազմի ժամանակ էր, Իրաքը ռմբակոծվում էր: ԱՄՆ-ի քաղաքներից մեկում ժողովրդական նախաձեռնությամբ հարձակվել էին արաբների թաղամասի վրա, ջարդուփշուր արել ամեն ինչ... Եվ պրեզիդենտական գվարդիան, անմիջապես, շատ արագ պարաշյուտով դեսանտ իջեցրեց դեպքի վայր ու կարգուկանոն հաստատեց: Ահա այդպիսի արագ կողմնորոշում է պետք, կողմնորոշման այդպիսի արագություն է պետք և ոչ թե բռնությունից պետք է վախենալ:
– Նման դեպքեր եղել են, բայց տարբերություն մինչև հիմա նախկին ու այսօրվա պետությունների միջև չենք կարողացել դնել: Շահարկողներն են միայն շատացել, և նորից պետության մասին մտածող չկա: Ներքին թշնամուն հաղթելու դեղատոմսի մասին պետք է մտածել: Չնայած այս դեպքում էլ երկմտում ես, թե ներսի թշնամին էլ դրսից բերովի է ու պատվերով թշնամանք է առա-ջացնում:
– Այո, կարող է: Ուրեմն աշխատել են մեզ վրա, լավ էլ աշխատել են, կոդավորել, գցել են մեքենայի վրա, և ընդունակներս պարծենում ենք, թե որքան բան գիտենք: Ամեն անգամ, ամեն ֆրազից հետո ետ նայելով, ակամա նաև զարմանում ենք, թե ինչքան ճիշտ խոսեցինք...
– Որերորդ օրն է Թատերական (Ազատության) հրապարակում ընդդիմության, այսպես կոչված, «Ազգային դաշինքի» միտինգներն են տեղի ունենում: Եթե այնտեղ լինեիք, եթե խոսափողի մոտ լի-նեիք, ի՞նչ կասեիք մեր ժողովրդին: Իհարկե, ես դրա հարկը չեմ տեսնում, որ Հրանտ Մաթևոսյանը հանրահավաքին պիտի խոսի, չեմ տեսնում և կոչի հարկը, որովհետև վերջին մի քանի տարում շատ սրբություններ ջնջվեցին, մեր ունեցած քիչ թե շատ հեղինակությունները վարկաբեկվեցին, և այսօր չկա այն այրը, ով կարող է իսկապես խելացի ճանապարհ ցույց տալ, ճշմարիտը ցույց տալ, որովհետև ճշմարիտը միայն մեկն է լինում (իսկ մենք այնքան ճշմարտություն ունենք, որքան կուսակցություն կամ թե որքան բնակիչ կա Հայաստանում), բայց, համենայն դեպս՝ Ձեր խոսքը գոնե նրանց, ովքեր կարող են, ովքեր ունկ ունեն լսելու:
– Սա չպիտի լիներ: Սա Աթիլլայի կերպարն է հրապարակում, սա Աթիլլայի կերպարն է բարձրացրած, կործանումը, կործանումի կերպարը... Սա չպիտի լիներ... Լավ-վատ չպիտի խառնվեին: Գլխավորը՝ քանդելը չպիտի լիներ, լավը

վատին խառնելը: Էստեղ գուցե իրենց որդուն էլ, իրենց ծնողին էլ, մեծին-փոքրին չհարգելն էլ է, ոտի տակ թշնամու հետ կորցնելը, բայց չպիտի լիներ, բայց լինելուց էլ հարկ է լավ խելագարվել: Դ. Դեմիրճյանի խոսքը տեղին է չէ՞՝ «Խելագարությունը խելագարվեց», կամ «Կռիվը կռվում է»: Այդ տեսակ արտահայտություն ունի: Պիտի խելագարվես, եթե պատերազմը խելագար է, պիտի լավ խելագարվես, որպեսզի հաղթես...

– Բայց այսօր էլի մեր պատմությունն է ջրի երես դուրս գալիս, և եթե մինչև հիմա դասեր քաղած լինեինք, այս օրին չէինք հասնի. ահա սրա տխրահռչակ օրինակը՝ ինչպես հունիս-հուլիսյան, այնպես էլ վերջին օրերի քաղաքական իրավիճակը:

– Ցավով պիտի համաձայնեմ: Մի երկու անգամ խորհրդարանում այդ մասին կոչ է եղել՝ խոսքի պես, համոզիչ ու տպավորիչ կոչ, բայց ուղղակի կոչ է եղել, որովհետև այդ անողները լինելիքի առջև պատասխանատվությունից խուսափելու համար են կոչն արել: Բայց իսկապես, այդ անկեղծ խոսքի կարիքը, կլոր սեղանի և անկախ խոսքի կարիքը կար. ես շատ եմ զգացել: Հրապարակում կարող և պետական դատողության տեր մարդիկ մի կլոր սեղանի շուրջ նստեն և առարկան, խնդիրը ներկայացնեն: Յուրաքանչյուրն ունի իր վերաբերմունքը, իր միտքը, իր տպավորությունը, և բոլորի խոսքից կամբողջանա առարկայի նկարագրությունը, և դրանից կարելի կլինի ելնել ու գործել ըստ նկարագրված առարկայի պատկերի: Ահա գործողությունների օբյեկտիվ ընթացքին համաքայլ գնալու ձևն է սա, կերպը և ոչ թե երեկվա որդիների պես դարձյալ մեր սուբյեկտիվ կարծիքները, մեր միակողմանի տպավորությունները որպես առարկայի ամբողջական նկարագրություն ընկալելով՝ հարձակվել այլ կարծիքների վրա, չհանդուրժելով այլ կարծիքներ: Իսկապես ոչ պետական այրերի վարք է դա: Եթե կարճ ասեմ, ուղղակի մեր Աստծուն մեզ հայհոյել են տվել, մեր կուռքերը խլել են, և այս արանքում որոշ թշնամանքով Լենինի արձանը կփլեինք, բայց այդ արձանը դեմոնտաժելու, քանդման հետ քանդելու կերպարն է հրապարակ ներխուժում: Արդեն գործող ուժ է դառնում քանդելը, և դրանից հետո Լենինից մինչև Շահումյան, Շահումյանից էլ մինչև Անդրանիկ ուղղակի մեկ քայլ է: Անդրանիկին արձան չկանգնեցնելը, մեկ ուրիշին քանդելը դրան է տանում ու մինչև դա է գնում: Եվ տես, թե ոնց սկսեցին դիկտատորին հայհոյել ու դամբարանից հանելով թքեցին ու վերջ: Մենք ուրախությամբ դրան ընդառաջ գնացինք՝ նախկին Միության բոլոր ժողովրդավարների հետ: Դրանից հետո էլ

ահա գնաց-գնաց ու սահման չդրվեց և դեռ գնում ու գնալու է... Եվ էս արանքում կգնան քո Ավետիք Իսահակյանն ու մյուս կենդանի հեղինակությունները, որոնցից կպահանջեն այն, ինչ որ նրանք ի զորու չեն: Համո Սահյանից դու ոնց ես ուզում, որ նա սուրը ձեռքին կողքիդ կանգնած լինի: Չի կարող Համոն, որովհետև 75 տարեկան մարդ է:

– Բայց կարծեմ համաձայնեցիք այն դահլիճին կամ կլոր սեղանին, որն այսօր հացից ու օդից առավել պարտադիր է: Կուզենայի թվարկեք այդ մարդկանց, ինքս իմ մեջ չուզենալով, որ նրանք լինեին որևէ կուսակցության ղեկավար կամ որևէ կուսակցության հարող մարդիկ, որովհետև կուսակցությունները խորհրդարանում այսօր շահարկում են կուսակցական շահը և անձնական ամբի-ցիաները:

– Չհամաձայնելով քեզ հետ, պիտի թվարկեմ առաջին հերթին հենց կուսակցության լիդերներին և հանրապետության նախագահին՝ որպես մեկ այլ կուսակցության լիդեր: Եվ պարտավոր էին ու են կլոր սեղանի շուրջ նստել ու իրենք իրենց մեջ խոսել, հնարավորինս անկեղծ՝ վեր մնալով կուսակցական շահերից:

– Լավ, այդ դեպքում համաձայնեք, որ Ձեզ նման մարդիկ պիտի լինեին նրանց կողքին:

– Փաստ է, շատ էլ ճնշիչ փաստ է, որ թեկուզև նույն Հովհաննես Թումանյանն էլ խորհրդարանում լիներ, նա նույնպես վերածվելու էր ընդամենը մեկ կոճակի, նրա ետևը կուսակցություն չէր լինելու: Փաստորեն կուսակցությունները խորհրդարանական աշխատանքների ճշգրիտ ձևեր են: Մարդկությունը կառավարման ուրիշ ձև չի գտել, սրանից ելնելով, փրկարար կոչը ոչ թե ժողովրդին պետք է հղել, այլ կուսակցություններին, որպեսզի նրանք իսկապես կարողանան վեր մնալ իրենց նեղ շահերից:

– Անհեռանկար բան է: Ոչինչ չի ազդի: Իմ կարծիքով, խորհրդարանն իսկապես փակուղի է մտել ու ժամանակն է, որ կամ կուսակցությունները լուծարվեն, կամ խորհրդարանը ցրվի, որը մեր սահմանադրությամբ չի նախատեսվում:

– Դասական կապիտալիստական երկրներում, Եվրոպայում և առհասարակ քաղաքակիրթ երկրներում, որոնք որպես տերություններ կայացած են, օրինակ՝ Իսպանիայում, ոչ հեռավոր անցյալում քաղաքացիական կռիվների վերջը Ֆրանկոն դրեց, որն իր ժողովրդի պաշտամունքն է այսօր: Այդպիսին Չիլիում Պինոչետն էր, Թուրքիայում Օզալը եղավ: Այս մարդկանց դիկտատոր էին

կոչում, բայց դա ընդամենը ռազմական ուժ է, որը գալիս է հաստատելու իշխանություն: Ցավալիորեն մենք այդ բանակը չունենք, որի գեներալը գար, բոլորի լեզուներին կապ դներ, ժամանակավոր լռություն պահանջեր, ասենք՝ երեք տարվա: Եվ գործող չինովնիկների համար ապահովեր նորմալ գործունեության վիճակ ու պայմաններ: Մենք այդ ուժը չունենք... Իսկ դիկտատոր ասած բառը տարբեր մեկնություններ ունի: Նրանք, ուրեմն, դրսից դարձյալ պարտադրում են, որ դիկտատոր ասածը մեզանում Ստալինն է, Չինգիզ խանն է, բայց չէ՞ որ այդ մասին չէ խոսքն ընդհանրապես: Բացարձակապես: Ուղղակի քաղաքական կյանքի դիկտատը ի՞նչ է պահանջում, ի՞նչ է թելադրում այս երկրի կյանքի պահանջը: Ասենք՝ Երևան քաղաքի պահանջների դիկտատը ո՞րն է: Մի երկաթյա բռունցք, մի երկաթյա ցախավել, չեմ իմանում, կատակով եմ ասում թե շիտակ, որ այս երկրի, այս Երևանի փողոցները մաքրվեն կեղտից ու խաժամուժից: Ո՞վ է այդ դեպքում Համբարձում Գալստյանին դիկտատոր կոչելու: Եթե փողոցները դիկտատորի բռնությամբ պիտի մաքրել տան, կարգուկանոն հաստատեն ու պահեն, ուրեմն թող այդպես լինի: Այս մասին է խոսքը: Լևոն Տեր-Պետրոսյանը չպետք է վախենա Արևմուտքի հովանավորներից: Այո, այո, կերպարն Ամերիկան է, Եվրոպան, քաղաքակիրթ երկրները: Մտել են այստեղ ու թելադրում են՝ դիկտատորից հեռու մնացեք, բայց նրանք ուրիշ մտավախություն ունեն, ուրիշ նպատակներով են ուզում հեռու մնալ, որովհետև մտածում են, որ դիկտատորը դարձյալ պիտի բարձրանա Մոսկվայից, միասնական երկրի միասնա-կան դիկտատորով, որն ահռելի սպառնալիք ունի ամբողջ աշխարհի վրա: Այդ դեպքում, իհարկե, կեցցեն ազգային-ազատագրական շարժումները, գուցե և՝ անկախ հանրապետությունները, թող կորչի դիկտատուրան: Ահա այս պահանջներով են ասում և ահա դրանից արտածելով առհասարակ դիկտատորներին է վերաբերում, նաև՝ տեղական: Թոդոր Ժիվկով լինի, Ռաշիդո՞վ, Սնեգո՞ւր, Լանդսբերգի՞ս, թե՞ Տեր-Պետրոսյան. նրանց են նաև զցում, գահընկեց անում, նետում առհասարակ դիկտատորին, բայց մեր դեպքում, երբ երկիրդ է կործանվում, ոտքիդ տակից փախչում, մարդկային ողբերգությունների այս բեմում ինչ դիկտատուրայի մասին կարող է խոսք լինել: Հետախուզությունդ պիտի որ այնպես անի, որ նրանց կոդերը չաշխատեն կամ քո կոդերն առաջանան քո երկրի պահանջներից: Քո օրենքները բխեն քո երկրից, վարվելակերպը՝ քո երկրի, ամենօրյա պահանջների արձագանքը լինի:

– Մեր պատմության ոչ հեռավոր էջերից մեկում, մոտավորապես նման մի իրավիճակում, Արամ Մանուկյան հայը շատ կարճ ժամանակահատվածում շտկեց դրությունը:
– Նա երկիրը հարմարեցրեց թշնամու առաջադրած պահանջներին, դիմակայելու պահանջներին: Հետո նաև մի ուրիշը եղավ: Մայիսմեկյան բոլշևիկյան-քեմալական կարգերը խարխլելուց հետո Դաշնակցությունը երկիրը վերցրեց իր ձեռքը, մի քիչ դաշնակցական տեռոր եղավ, բայց դա էլ մեծ բան չտվեց ու դա էլ նույնպես օրվա պահանջ էր:
– Այս առումով ումի՞ց պետք է պահանջենք: Մեր ժողովրդի հայելին խորհրդարանն է, այնտեղ ժողովրդի ընտրյալներն են նստած և նա էլ ի զորու չէ: Եվ ընդհանրապես, կարծում եմ, ընթեր-ցողներին շատ կհետաքրքրի Նահապետի կարծիքը նաև որպես պատգամավորի:
– Իմ բնածին հակումներով հիմարությունները չեմ լսում: Չեմ կարողանում լսել: Զայրանում և տեղնուտեղը խլանում եմ հիմարությունների առաջ, և ականջներս բացվում են խելոք-հավասարակշիռ ելույթներից և ըստ այդմ էլ իմ մեջ, իմ ներսում գեներացվում է այն խելացին, որ խորհրդարանն է ասում: Բայց ցավալիորեն խորհրդարանային աշխատանքի կերպը այն կերպը չէ (իմ անձնական փորձից եմ ասում), որտեղ մեր իրականությունը, մեր խոսքը իր հստակ պարզությամբ կանգներ մեր դեմ: Ես չգիտեմ՝ այդ ինչ կախարդանքով ամեն անգամ ամենաշիտակ վիճակները աղա-վաղվում, և հատուկ բանաձևի փոխարեն ինչ-որ աղքատացած, աղճատված, աղավաղված, կարծես թե պատասխանատվությունը այլ ուժերի վրա գցած ինչ-որ բաներ են ստացվում. ոնց որ թե հանձնում ենք դարերին (դարերը մարդիկ չեն), հանձնում ենք գրքերին (գրքերը մարդիկ չեն)... Խուսափում ենք ամեն անգամ... Պարզապես խորհրդարանում երևի չի լինելու, դա մի տասը մարդու որոշելու բան է: Մեկ-մեկ մտածում եմ, թե ահա ուր է, թագավոր ունենայինք, և այդ թագավորը իր խորհրդականներին շուրջը հավաքեր: Միմյանց նկատմամբ այնպիսի փոխադարձ եղբայրական սեր ու եղբայրական հանդուրժում ունենայինք, որ իսկապես կարողներս կարողներին ընտրեինք և խորհրդարանին ասեինք՝ ցտեսություն, զատվեինք – քաշվեինք մի կողմ և Հայաստանի Հանրապետության քաղաքականություն վճռեինք-որոշեինք:
– Ճշմարտությունից չենք կարող խուսափել. թագավորություն ունեցած ժամանակ էլ մեզանում զզվոտոցն անպակաս է եղել:

– Դա լեգենդների, առասպելների ժամանակ է, այն պատմությանն է պատկանում:
– Բայց պատմությունից դասեր չքաղեցինք, գոնե նրա համար, որ սխալները չկրկնվեն...
– Դե, դա արդեն բանաձևած, շաբլոն իմացություն է: Ես գիտեմ միայն, որ այսօր արդեն ապացուցվում է՝ Վահան Մամիկոնյան զորավարը հայ է եղել, թե հայ չի եղել: Բագրատունիները հայ են եղել, թե հայ չեն եղել, Գրիգոր Նարեկացին... ...Հռիփսիմեի տաճարը հայերն են կառուցել, թե հայերը չեն կառուցել: Այսօրվա մեր նահանջը դեպի այդ անցյալը մեզանից հեռացնում և խորթացնում է: Ալեքսանդր Թամանյանը 600 տարվա ընդմիջումից հետո կամարվեց ու կապվեց Անիի հին վարպետների հետ... Հովհաննես Թումանյանը 1000 տարի հետո ապացուցեց, ասաց, որ Նարեկացին հայ է: Ճի՞շտ է, թե ոչ...
– Դե, մեր երակներում էլ նույն արյունն է, նույն գեներն են, ուրեմն...
– Ուրեմն, եթե անցյալի մասին ենք խոսում՝ անցյալի առաջ պարտականություններ ունենք, իսկ անցյալը Տիգրան Մեծն է և Խորենացին է, և որպեսզի երևա, որ Խորենացին հայ է, և դու նրա թոռն ես...
– Դուք, Նահապետ, հանրապետության նախագահի վստահված անձ եք եղել նախագահական ընտրությունների ժամանակ, վերջին անգամ ե՞րբ եք Դուք նրա հետ հանդիպել:
– Գիտես, ես բաց մարդ եմ և այդպես էլ կասեմ, թե երբ՝ վաղուց:
– Իսկ վերջերս ցանկություն ունեցե՞լ եք նրա հետ մոտիկից խոսելու-խորհրդակցելու, կիսվելու:
– Գիտես, եթե նախագահը նույնիսկ ես լինեի, կողմնակիցների այդքան միջամտությունը ինձ պիտի գրգռեր և չարացներ, ու չգիտեմ դա առհասարակ ճի՞շտ վարվելակերպ է քաղաքական կյանքին մոտիկ կանգնած մարդկանց համար: Ճի՞շտ վարվելակերպ է՝ մոտենալ, խորհուրդ տալ, չգիտեմ: Կամ գուցե դա իմ անձնական թերությունն է, կամ գուցե ես այն լիարժեք, իրականությունը կռահող, հասկացող անձնավորությունը չեմ, որպեսզի մոտենամ և նախագահին «բարեկամաբար» պարտադրեմ գնացքը դեպի այն երթը, այն ելքը, որն իսկապես փրկություն կլինի... Նախագահին ես վստահել եմ, սա կարելի է ստուգապես, հենց այդպես էլ գրել. Նախագահին ես վստահել եմ: Նախագահների մյուս թեկնածուների, այսպես կոչված, հավաքականի մեջ ինքն է ինձ թվացել ամենաարժանավորը: Նա ոչ փակ, ոչ կուսակցական է թվացել,

որն իր չորս կողմի վրա դռները բաց է թողել հանրապետության հոգսերի առաջ: Կուսակցություններին ես վերագրել եմ ճիշի, իսկ հանրապետության համահայկական կյանքի որևէ մարզի ճշգրիտ, կենդանի ընկալումները հանրապետության նախագահին, որն այդ բոլորի վկայությունն է իր մեջ: Ընդդիմությունը, քաղաքական կուսակցությունները իրենց մեղքն ունեն հանրապետության նախագահի առջև: Եթե նախագահը պետականություն է նշանավորում իրենով, և կուսակցությունները պարտավոր են կուսակցական իրենց էգոիզմը այդուհանդերձ մի քիչ մարել, միայն խոսել այն դեպքում, երբ իրենք իրենց մեջ ունենային պատասխանը, թե տվյալ վիճակում նախագահի փոխարեն իրենք ինչ կանեն, անպատասխան հարցերով հրապարակ չմտնեին, հեղա-փոխական չլինեին՝ հանուն հեղափոխության. դա սարսափելի է: Դա կործանեց մեր առաջին հանրապետությունը, այո, այո, կուսակցականությունը կործանել է Հայաստանի առաջին հանրապե-տությունը և կկործանի նաև այս հանրապետությունը, եթե ուշքի չգանք:
Հանրապետության նախագահին ես երևի պիտի ցանկանայի, որ հանրապետությունը պատերազմի եզրով տաներ, բայց երկիրը պատերազմի մեջ չքաշեր: Բայց, այդուհանդերձ, պատերազմի մեջ ենք, Արցախի կորուստը Հայաստանի կորուստն է: Եվ տղամարդկություն ունենանք ասելու՝ թուրքի բացարձակած լոգունգի տակ, որ Հայաստանի գոյությունը Կովկասում, առհասարակ, կասկածի տակ է: Իսկ թե ամբողջ աշխարհի, սփյուռքի, աշխարհում փռված հայության համար դա ինչ նշանակություն ունի, կարիք չկա ոչ մեկին բացատրելու: Հայաստանը լինի՝ հայությունն աշխարհում լինելու է, Հայաստանը չլինի, հայ չի լինի ու... Քո ոչ մի Դոքմեջյան, քո ոչ մի Ֆիլպեջյան, քո ոչ մի վաստակ աշխարհի առաջ, քո ոչ մի բարձրանուն չի կարող փոխարինել այն հասկացությանը, որ է՝ Հայաստանի Հանրապետություն:
Սա հայության օրրանն է, օրորոցն է, վերջին հայրենիքն է, վերջին հողակտորն է: Հայաստանը որ վտանգվեց, վտանգվելու է ամբողջ հայերիս, ողջ հայերի ճակատագիրն աշխարհում բացարձակապես: Համարի գնչուների խմբեր՝ էստեղ-էնտեղ թափառող, ըստ Գարսիա Մարկեսի վեպի: Յուրաքանչյուր հայ քաղաքական գործչի, ում խոսքը և գործը արձագանք է գտնում, շարժում, նյութականանում է այս երկրում, նա պարտավոր է այս երկրի մասին մտածել որպես նախագահի, թեկուզ իր վիճակով չոբան լինի...
– Բայց մեր անճարակությունից է, որ դրսի թշնամուն ոչինչ չենք կարողանում

անել, ներսում ենք իրար ուտում: Չնայած, ցավոք, պիտի խոստովանեմ, որ բոլորս էլ տեսնում ենք, որ ներսի զզվռտոցը ընդամենը աթոռի ակնկալիք է: Կընկնի Շահումյանը, չի ընկնի, Ղարաբաղը կընկնի, թե չի ընկնի...
– Չեմ ուզում հավատալ...
– Բայց այդպես է: Այն մարդիկ, ովքեր 1-2 տարի առաջ միասին են եղել, այսօր զուտ կուսակցական համոզումների պատճառով բաժանվել են մասերի, և նրանց այսօրվա չկիսածը մեր վաղվա կորսված հայրենիքն է լինելու... Եվ ինչպես եղել է դարեր շարունակ, էսօր էլ նույնը կա: Մենք ղեկավար չենք սիրում, մենք թագավոր չենք սիրում, մենք նախագահ չենք սիրում: Չենք ընդունում, որ նա եթե երեկ մեզ հետ ուսանող է եղել կամ գործընկեր, էլ չեմ ասում պայքարի ընկեր, այսօր ահա, նախագահ է դարձել: Մեր երեկվա պրոֆեսորին չենք ընդունում պրեզիդենտի պաշտոնում:
– Ճիշտ չէի՞ն անում մեր հին թագավորները, որոնք իրենց արմատները կապում էին հին Ճենաց, առասպելական աշխարհի հետ: Արշակունիները իրենց ինչ-որ միֆական աշխարհի հետ էին կապում, երևի Ուրարտուից էին գալիս: Բագրատունիները իրենց եբրայեցիներ էին համարում, որովհետև քրիստոնեական երկրում էին արդեն հայտնվել և իրենց ակունքները բխեցնում էին քրիստոնեական ակունքներից: Եթե իրենցից, իրենց միջից որևէ մեկը լիներ, ո՞վ կթողներ:
– Այսինքն տանու տերերին «օրհնեա տեր» չկա՞...
– Այո, ժողովուրդները միշտ այդպես են անում: Սուլթանին վերցնենք, ասենք նրա արմատները գալիս էին 1200–1300-ական թվականներից, լեգենդների միջոցով երկրով ու ժամանակով իրենց արմատները հեռացնում էին: Բայց ինչ սքանչելի տղերք են լինում, չէ՞, որ այդպես է լինում: Օրինակ, ԱՄՆ-ում, մեկը, մի սքանչելի, մի հիանալի տղա, որը ռմբակոծիչի օդաչու է եղել, պատերազմի է մասնակցել, վերքեր է կրել, ինքնաթիռը ծովն է ընկել, պատահականորեն է փրկվել... Թե չէ այսպես ճախրելով արանքից դուրս է գալիս, թե ես ձեզանից մեկն եմ ու թե ես պրեզիդենտ եմ... Հրաշալի չէ՞, հոյակապ չէ՞... Մեզանից մեկն էնտեղ: Հետո էլ, որ պետք է լինում ու տեսնում է, որ բերաններ բացվեցին, թե պիտի խոսեն, թե՝ պառավ, քյոփակ, դու մեզ ո՞նց ես կառավարելու, ասում է՝ բժշկից տեղեկանք կբերեմ, որ կինս ինձանից դժգոհ չէ...
– Դա ԱՄՆ-ի տարբերակն է:
Հիմա մեզ մոտ էդ պոռթկումն անցել-գնացել է, պահպանել է պետք, ամրացնել է

պետք՝ բոլորով, ամեն ինչով հանդերձ, և չէի ցանկանա մտածել՝ սա ընդամենը աթոռակոիվ է, բայց...
– Մեր բոլորիս բարեկամ Անդրանիկ Ծառուկյանից ապրողներին դաժանության հասնող մի բան է մնացել: Նա ասում է՝ երբ 1915-ին թուրքը յաթաղանը բարձրացրեց, չհարցրեց կաթոլի՞կ ես, թե՞ առաքելական, հարո՞ւստ ես, թե՞ աղքատ, պատգամավո՞ր ես, թե՞ հասարակ շարքային, վանեցի՞ ես, այնթապեցի՞, թե՞ կիլիկեցի: Ոչինչ չհարցրեց: Հավասարապես ամբողջ ազգին կոտորեց: Նույն սպառնալիքն է այսօր կախված բոլորիս վրա, և ամենաքիչը պիտի հիմար լինել, իսկ ամենաշատը՝ ստոր դավաճան, որ հաշտության եզրը չգտնվի: Թշնամին սա է օգտագործում և դեռ ավելին է սպասում: Դեռ վերևում ասացի, որ շատերն անկեղծ չեն, որովհետև շատ-շատերը իզուր են խոսում: Հին կոմունիստական ժամանակներում, մի 10-15 տարի առաջ, իմ գործից, իմ վիճակից, իմ տպավորություններից ասեմ. համալսարանում կամ այլ տեղերում հանդիպումների ժամանակ մեկ-մեկ ինձ բռնում էի նրանում, որ խոսում եմ ի լուր ՊԱԿ-ի, որպեսզի երկրի քաղաքացու իմ խոսքը նրանք հասցնեն ուր որ պետք է: Եվ նրանք էլ իրենց հերթին հաշվի առնեն, որ այդքան միամիտ չի կարելի լինել, այլապես երկիրը կործանվում է: Մոտավորապես ի լուր խոսում էի ռուսների հետ, ի լուր Աստծու, թե ինչ... Հիմա շատերը մեր խորհրդարանում երեսներին մեռոն են անում, խոսում են ի լուր, չհասկանալով արդեն, որ այսօր ռուսը չկա, որ իրենք են երկրի պատասխանատուն, և յուրաքանչյուրի վարքը պիտի պարտադրված լինի հոր իրենց վիճակից, երկրի նահապետի, երկրի տիրոջ վիճակից: Շատ եմ ցավում ու վախենում, որ շատերի մեջ դեռ կա ուղղակի փախստականը: Վերջերս մի հարցազրույցում ասել էի, որ, այդուհանդերձ, մի քսան լիտր վառելիք պահած է փախուստի համար. վախենամ, որ շատ-շատերի ոտքը փախուստի լինի: Վախենամ, որ էս հողի վրա կանգնած տղամարդ չեն ապրելու և մեռնելու եզրով գնալու, շատ ավելի՝ որպես քաղաքագետների զգաստանալու, չնահանջելու դիրքերում կանգնելու՝ եթե սպանելու են՝ սպանեն: Եվ երիցս համոզված եղիր, որ չեն սպանելու: Շահումյանն իզուր ենք տվել: Արծվաշենն իզուր ենք տվել: Դաժան և մեր ականջների համար, ցավոք, անսովոր բան եմ ասելու, շահումյանցիները պիտի կանգնեին ու կոտորվեին, սա պատերազմի տակտիկայի մեջ, մարտավարության մեջ լավ պարտություն է: Թշնամու ստրատեգիան հենց դրա վրա է կառուցված. նեղել, փախցնել, փախցնել Էստեղից, Կովկասից, Կովկասը դատարկել: Իրենց դրոշի վրա հստակ

դա է գրված: Ծերենցը դեռ 1879 թվականին Բեռլինի վեհաժողովից առաջ դա գրել է, իսկ «Փորձ» ամսագիրը տպագրել:
– Մենք բազմաթիվ հարցեր շոշափեցինք, Նահապետ: Այնուհանդերձ չեմ կարող Ձեզ այս հարցը ևս չուղղել. այսօր ո՞ր հարցն է մտահոգում, անհանգստացնում Հրանտ Մաթևոսյան արձակագրին:
– Ղարաբաղի հարցը, Հայաստանի Հանրապետության, առհասարակ հայ ժողովրդի՝ այստեղ մնալու հարցը, Հայաստանի ապագայի հարցը, այսօրվա հարցը... Այստեղ այսօրվա հարցին չպատասխանելով, այսօր այստեղ մի քայլ նահանջելով՝ ես դավաճանում եմ վաղվա Հայաստանին... Վաղն արդեն ուշ է լինելու, վաղը ես Կալիֆորնիայից ու այլ հեռուներից, իմ ապահով կամ անապահով վիճակի միջից արդեն հաչելու եմ երեկվա օրվա վրա, որ այսօրվա օրն է... Իսկ դա շատ ուշ է լինելու արդեն. հեռվից շատ ենք հաչել. հեռվից հաչել ենք երեկվա համար, ոռնացել ու ոռնացել ենք երեկվա օրը: Դրանք արդեն պատմության հարցեր են դարձել. պատմություններ են գրվել... Այսօր իրականության առջև ենք կանգնել ու...
– Հրանտ Մաթևոսյանը ի՞նչ կուզենար անել գրականության մեջ:
– Կուզենայի էսօրվա էս մութ հեղեղի մեջ, կանոնավոր, կարգին, հավասարակշռված տեքստ գցել հրապարակ, ոնց որ ասենք՝ Սարյանի «Ծաղիկները» (եղեռնի ժամանակ) առանց ծաղիկների. էսպիսի տեքստ եմ ուզում գցել հրապարակ: Դա չգիտեմ, ինքնազոհություն կլինի, երևի, որ ասեմ՝ հայրենասիրությունը դա է. դա գուցե հայրենասիրություն չէ, բայց հայրենասիրություն է, պիտի ասենք էն՝ ինչն արժանի լինի պաշտպանելու...
– Այսինքն, նորից վերադառնանք այն խոսքին, որ ամեն մարդ պետք է անի այն, ինչ կարող է, որպեսզի կայանա երկիրը:
– Այո, փանջունիներին պիտի դուրս գցել հրապարակից: Ինչպես որ շարժման սկզբում էին ասում՝ ուղղակի գոռ համար կռվողներին: Լափի մոտ գզվռտոց, և շատ դեպքերում ինչ նյարդեր էին պետք, որպեսզի ասենք՝ ոչինչ, էդ էլ կլինի: Հետո լավը վատից կզատենք: Թե ասում ենք՝ էս գործը մարդու անձնազոհության գործն է, էս տականքն ի՞նչ գործ ունի այստեղ...
– Ձեր սեղանին մեր գեղանկարչության դասականներն են՝ երեկն ու այսօրը, պատմությունը ինքն է նյութ եղել, էս մարդիկ մեզ են հասել, և նորից մնացողը մեր մշակույթն է լինելու. լավ կլինի, իհարկե, սահմաններով, հողով հանդերձ մնար...
– Մեր մշակույթը, այն, ինչ որ կա, իրական Հայաստանն է, իրենք իրական

Հայաստանի ձայներն են... Էսօրվա մեր գործիչները՝ մշակութային, քաղաքական, պարտավոր են իրենց էս նախնիների և ժամանակակիցների օրինակով խոսել մեր խոսքը, ասել մեր բառը, ոնց որ մեր մեծերը կարողացել են զատել. մեր Սարյանը, մեր Հակոբը (Հակոբյան), մեր Սուրենյանցը կարողացել են, էնպես էլ մենք պարտավոր ենք մեր խոսքը զատել և ուրիշի դուդուկի տակ չպարել. էդ չպարելու տակ նույնիսկ թշնամին մեզ բարեկամ կհամարի, երբ տեսնի, որ մենք մեր խոսքն ասում ենք, երբ տեսնի, որ մենք ամուր կանգնած ենք մեր հողին, ամուր՝ մռութն ու միտքը ջարդելու համոզմունքով:
...Փողոցում ողբերգություն է ծավալվում, պատմական վեպ է ծավալվում, երանի նրանց, ովքեր առողջ աչքեր ունեն և կարողանում են կարդալ: Իհարկե, վիրավորված ենք բոլորս էլ, բոլորիս կյանքն է վտանգված, բայց թե կարող ենք, պիտի նախ էս տղերքին, էս երեխեքին փրկենք: ...Իսկապես գրականության ժամանակ չէ...
– Եկեք, էլի հասեք սկզբին, Նահապետ, այսինքն ամեն մեկն իր գործը պետք է անի, հողի մշակ ես՝ հողդ մշակիր, գրի մշակ ես՝ գիրդ մշակիր, քո գործն արա, որպեսզի, ասել Հրանտ Մաթևոսյան հային՝ «...Էս երկիրը երկիր դառնա...»:

Զրույցը վարեց Վանուշ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆԸ
«Հայաստանի Հանրապետություն», 20–21.08.1992 թ.